



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ltn

V 2220

1999

ՔԵՆԻ ՄԸ ԽՕՍԻ

ԱՆՈՒՆՈՎ

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻՒԹԵՐԵՆԵՅ ՎԸՆԵՅԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՏԵՏՐԱԿԻ ՄԸ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ



284

Տ Պ Ե Ե Լ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

= 1852 =



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

42220-62

28 2224

Քանի ծը խօսք անոանով Ա Էնեպիլի Միլիկարեանց Ա ան
չին հրապարակութեամբ Գեորգի ծը աստիճան պատասխանը :

Երևանի Գեորգի Սարգսյանի հասարակութեանը արդէն
յայտնի են՝ Պ. Չամուրազեանին զ Ա Էնեպիլի Սարգսյանին
Երևանի Գեորգի Սարգսյանին հետեւեալ ձևով՝ (Ճառ հա
ղորդ . Գ . Եր . 93) Սարգսյանին սխալման մէջ ցը
ցունելու յանդգնութիւնը և դարձեալ զանիկայ հայաստան
խափանեալ լրագրին մէջ ջատագովելը, և մեր անոր բազմա
թիւ սխալներուն հետ այս կտորիս ալ դէմ ըրած գատաստանը :
Մեր նպատակը, ինչպէս արդոյ ազգայինքս և նոյն իսկ մեր
հատուածեալ եղբարց ողջամիտ մասը կրնան վիպել, ատե
լութիւն արծարծել կամ կրօնական նախանձայուղութիւն
գրգռել չէր և չէ՛, այս բարեմասնութիւնները Ունիթօու
կանց հարազատ զակրներուն վերապահելով, այլ Սարգս
յանեայց ուղղափառ եկեղեցւոյ ողջմտութիւնը, իրաւուն
քը և պատիւը պաշտպանել այն վարձկան մշակներուն դէմ,
որոնք իրենց կորստական շահասիրութեանը համար՝ մեր
ազգին կրօնական ամբողջութիւնը կ'աշխատին քայքայելու
և այս կամ այն օտար եկեղեցիներուն և ազգերուն երկա
թի լուծին տակը խօթելու, զորն որ ո՛չ մեր երանաշնորհ
նախնիքը, ո՛չ մեր նախնեայ նախնիքը և ո՛չ ալ մենք՝ ա
նոնց հաւատարիմ աւանդապահներս և ժառանգներս՝ միայ
ն և յօժարութիւն չենք ունեցիր յանձն առնելու և ո՛չ ալ եր
բէք պիտի ունենանք :

Մեր գատաքնութեանը մէջ չուղեցինք ամենեւին դա

տել Լեւոնի վարդապետութեան ողջամիտ կամ ճողորմական բե-
 լալը և Հայոց եկեղեցիին իրաւամբ կամ յանիրաւի (ինչպէս
 է Պ. Չամբուռեանին և անոր կուսակիցներուն կարծիքը)
 զանի հերքելն ու դատապարտելը . որովհետեւ եկեղեցւոյ
 վճիռը՝ ինչպէս որ ըսեր եմ, իմ կամ պատուելիին կամ այլ
 որ և իցէ Տասնաոր աշխարհականի կամ եկեղեցականի Դատաւ-
 ասանին պակը չիցնար երբեք . և ասոր համար Բաւական է գիտ-
 նալը, թէ Հայոց ընդհանուր եկեղեցին շէնքն իւր հերձիկ թէ
 ո՛չ : Իտրձեալ կ'ըսենք, չուզեցինք երբէք քննել յիշեալ ժո-
 ղովքին ո՛չ ուղղափառութիւնը, ո՛չ այլափառութիւնը և
 ո՛չ ալ Լեւոնի ովքըլալը . ալ այս կանոնս բռնեցինք, թէ
 Հայոց Եկեղեցւոյն հերքածը՝ անոր որդիքն ալ պարտական
 են հերքելու, և անոր ընդունածը՝ իրենք ալ ընդունելու .
 և քանի որ կրօնական նիւթ մը Հայոց Եկեղեցին կը հեր-
 քէ, անոր որդւոցմէն մէկը ինքնագլուխ պէտք չէ որ յան-
 դրգնի զանիկայ իրբեւ ընդունելի ցրցունելու : Ասոնք գը-
 րած ժամանակնիս՝ մեր աչքին առջեւը ունէինք նոյն իսկ
 Հռովմայ Եկեղեցւոյ ան սահմանադրութիւնը, որով ամեն
 պապական եղողները պարտաւորեալ են կրօնական նիւթե-
 րու վրայ այնպէս դատել ինչպէս Հռովմ կը դատի, որ և
 այս սահմանադրութեան դէմ մեղանշողներուն վրայ ամեն
 ժամանակ նզովքի շանթերը թափելէն և զանոնք հաւատա-
 փորձութեան խարոյկներուն մատնելէն երբէք ետ կեցած
 չէ : Ուստի թէ որ ուղիղ կը սեպուի Հռովմայ այս դրու-
 թիւնը, ուղիղ պէտք էր ըլլար և մերինը, թէ ամեն Հայ
 պարտական է իր Եկեղեցւոյն կրօնական դրութեան դէմ
 գալիք բաներ չի գրելու . իսկ եթէ Հռովմինը միայն ուղիղ
 է ու մերը սխալ, ասիկայ այն տկարամիտ սնապարծներուն
 տրամաբանութիւնն է, որոնք անձնախար նախապաշարմամբ
 սորված են ըսելու թէ մերինը միայն ճշմարիտ է :

Այսչափս գիտնալէն ետքը՝ խօսինք քիչ մըն ալ Արշա-
 լայ Արարաբեան օրագրին 403=406 թիւերուն Բանասիրակա-

նին մէջ Ազգասիրի մը յօրոհածներուն վրայ քանի մը խօսք աշ-
 Խունով տեսրակին վրայ, որն որ Ահնետիկի Ս. Ղազարու
 Անթրին մամուլէն այս տարի յունով. 13 ին հրատարակեցաւ :

Պապական Եկեղեցւոյ պատմութեանը և վեճակին տե-
 ղեկութիւն ունեցողները շատ աղէկ գիտեն, և թէ որ
 պէտք ըլլայ նէ՝ կ'ապացուցանեն, որ անոր մէջ ՚ի սկզբանէ
 հետէ կրօնական ծանր նիւթերու վրայ խնդիրներ, յուզ-
 մունք, վեճարանութիւններ և մինչեւ զիրար հալածել միշտ
 եղած են, մանաւանդ Պոմինիկեաններուն՝ Պոանչիսկեան-
 ներուն հետ, Սիօղիաններուն՝ Թոմայեաններուն հետ,
 Թինետիկեաններուն՝ Հանսենեաններուն հետ, Եպիսկո-
 պոսներուն՝ Պապերու հետ, և այլն, և այլն, և այլն, որոնց
 ամենը հոս յիշատակել երկայն կ'ըլլայ : Սակայն՝ թէ որ
 դուրսէն մէկ Հայագաւան մը և կամ Յունագաւան մը ա-
 նոնց վէճերուն մէջ խառնուելու ըլլար նէ, չէի՞ն մի ըսեր
 անոր, թէ դուն մեր կրօնքէն չըլլալով, իրաւունք չունիս
 մեր ընտանի վէճերուն մէջ խառնուելու : Թէ որ կ'ըսէին,
 և իրաւունք ալ ունէին ըսելու նէ, ես ալ կ'ըսեմ, թէ ի՞նչ
 արտօնութիւնով կամ որո՞ւ հրաւիրանօք Ազգիական ծո-
 վուն խորշերէն այլակրօն մարդ մը ելեր է՝ մեր ու Պ. Չա-
 մուռաճեանին՝ երկու արեւելեան Հայաստանեայց Եկեղեց-
 ւոյ որդւոցը ընտանի վէճին մէջ կը նետուի, ինքզինքը ազ-
 գասէր, իմաստուն, ճշմարտասէր և այլ ինքնակոչ պատ-
 ուանուններով բեռնաւորած, որ եթէ արգեամբ ու չէ՛ թէ
 անունով միայն ճշմարտասէր էր այս արգոյ անձը, պէտք
 էր որ քանի մը խօսք ալ Պ. Պօռէին Հայոց դէմ ըրած
 հերձոհածող, հերքարկող, աղանդատոր, մոլորեալ, եւսիքա-
 կան և ուրիշ տեսակ տեսակ զրպարտութիւններուն դէմ
 խօսէր ու ազգասիրաբար ապացուցանէր, թէ Հայոց Ե-
 կեղեցւոյ վարդապետութեանցը մէջ ամենեւին մոլորութեան
 հետք չի կայ. թէ Հայոց Եկեղեցին՝ Եւտիքէսը իր մոլո-
 րութիւններովը մէկտեղ կը դատապարտէ. թէ Հայոց Ե-

կեղեցին բնաւ մէկ ատեն հերետիկոսութեան մէջ ինկած չէ, երբոր իր անսխալ Հռովմը՝ Վիքերիոս պապին օրովը Երիտասկանութեան ազանդին մէջ ինկաւ. թէ Հայոց Եկեղեցին բնաւ մէկ ատեն հերձուածներ ծնած չէ, երբոր իր Թագոսկի եկեղեցեաց ըսած Հռովմը հարիւրաւոր հերձուածներ իր մէջ ծներ է: Վերջապէս, պէտք էր խոստովանէր և ապացուցանէր, թէ Հայոց Եկեղեցին է ճշմարտապէս Քրիստոսական և Եռաբլական Եկեղեցի, որ անոնց սորվեցուցած հաւատքէն մազի մը չափ հեռացած չէ. որ ամեն քրիստոնէից համար կ'աղօթէ. որ պէտք եղած ժամանակը անոնց բոլոր կրօնական պէտքերը անխտիր կը կատարէ. որ յայտնապէս ու միշտ կը քարոզէ, (թէ և ասով մեծամեծ վնասներ ալ կրած է), թէ ամեն հաւատացեալ, թէ՛ յունադաւան ըլլան թէ՛ պապադաւան, եթէ Քրիստոսի Տեառն մերոյ, իւր սուրբ առաքելոց և անոնց հետեւող սուրբ Հայրապետաց աւանդած հաւատքը ու վարդապետութիւնները ընդունին ու պահեն, կրնան փրկութեան հասնիլ, և կ'ուսուցանէ, թէ քրիստոնէից միաբանութեան կեդրոնը չէ թէ մեղաւոր ու սխալական մարդ մըն է, այլ ինքն յաւիտենական քահանայապետն Քրիստոս, և անոնց միաբանութեան կապը չէ թէ ծէսերու և արարողութիւններու միաձեւութեանը վրայ կը կայանայ, այլ իւրեանց փրկիչ Եստուածամարդոյն և իրարու մէջ ունեցած բարոյական անարատ սիրոյն վրայ. երբոր « Հռովմէական Եկեղեցին ճայր և գլուխ եկեղեցեացը » ասոնց ամենուն ալ հակառակը կ'ընէ ու կը քարոզէ, և զամեն անոնք, որ Եկեղեցւոյ ճշմարիտ գլուխը որ է Քրիստոս՝ իր եպիսկոպոսին կամ առաջնորդին հետ չեն փոխանակեր ու զանի Քրիստոսի սուրբ Եկեղեցւոյն բացարձակ և մի միայն գլուխ չեն ճանչնար ու չեն ընդունիր և ներողութեան անդորրագիրներ չեն ստանար անկէց, բոլորն ալ՝ թէ հայրապետ, թէ եպիսկոպոս, թէ քահանայ, թէ թագաւոր, թէ ժո

զովուրդ, թէ սուրբ, թէ վկայ և թէ հրեշտակ, ամենքը մէկէն դժոխքի կրակներուն կը մատնէ անխնայ. մոռցած ըլլալով, որ ինքն ալ մեզի նման և մեզի հետ մէկտեղ հասարակաց դատաւորին՝ Քրիստոսի առջեւը պիտի կայնի, դատուի և իր ըրածներուն փոխարէնը պիտի ընդունի :

Թէ որ այս տետրակը գրող արդոյ անձը՝ իր իմաստուն ըլլալուն պատճառովն է որ մեր վէճին մէջ կը նետուի, պէտք էր գիտնար, որ իմաստութեան սահմանը ի՞նչ է միայն ճշմարիտը չէ. մանաւանդ թէ հաւատոյ խնդիրներուն մէջ մարդկային իմաստութեան կարեւորութիւն չի կայ, և Աստուած ալ միշտ յիմար մարդարէներ ու տգէտ առաքեալներ ընտրեց, որ իրեն պէս իմաստունները ամբողջն ու յիմարեցունն : Աթէ իբրեւ ճշմարտութիւն փնտրող ու քարոզող, պէտք էր իր խիղճը վկայէր, որ գրած տետրակին մէջ՝ խեղճ ու մեռած ճշմարտութեան ոսկերքն անգամ չի կան, թող թէ անոր հետքը : Աթէ իբրեւ հիւր, պէտք էր գիտնար, որ չի կոչուած հիւրերը հասարակօրէն անպատիւ ետ կը դառնան : Ահրջապէս՝ եթէ իբրեւ դատաւոր, պէտք էր գիտնար, որ Հայոց ու Պապականաց մէջ ամենամեծ վիճ կայ. մանաւանդ թէ առջինը երկրորդէն յառաջ ու ուղղակի Քրիստոսէն հաստատուած ըլլալով, իր անդրանկութեան իրաւանցը յափշտակութիւն է, թէ որ Հռովմէն կամ այլ որ և իցէ եկեղեցիէ դատաւոր ընդունելու ըլլայ. որովհետեւ երբոր Հայաստան քրիստոնէութեամբ կը ծաղկէր սուրբ Աբգարի ժամանակը, Հռովմ գեռ կռապաշտութեան թանձր խաւարին մէջ կը թաւալէր, և ինչպէս Խորենացի հայրերնիս ալ կը վկայէ (Գիրք Բ. Գլ. ԼԳ. Եր. 227=228) Հայաստանն էր, որ Հռովմին քրիստոնէական հաւատք կը քարոզէր, և ոչ թէ Հռովմը Հայաստանին : Վանք հիմա մեր արդոյ իմաստունին քանի մը ուղիղ սեպած սխալները տեսնելու :

1. Մեր պատուական իմաստունին ըսածին նայելով,

Բարկէն, Վերսէս շինող, Երրահամ և ուրիշ Կաթուղի-
 կոսները Գգիսո-Լեամբ հերքած են եղեր Վաղկեզնի ժո-
 ղովքն և Լեւոնը, և իրեն զանոնք ընդունելը՝ իր այնչափ
 Կեփամսո-Լեամբ չննած ու ստուգած ճշմարտութեանը պը-
 տուզն է եղեր: Բայց ո՞վ է որ չի գիտեր, թէ Պապական
 Եկեղեցին հաւատքի քննութիւն ընել և ճշմարտութիւն
 ստուգելը չի ակորժիր. այլ իր գիրկը գացող ինկողներէն՝
 անպայման և կոյր հնազանդութիւն կը պահանջէ: Ո՞ր ազ-
 գային գրականութեան տեղեակ և հնախոյզ մարդը չի գի-
 տեր, թէ հինգերորդ դարը՝ Հայոց լեզուագիտութեան
 ու գրաւոր լուսաւորութեան ոսկի դարը սեպուած է, ու
 բուն նմանը՝ ո՞չ առաջ և ո՞չ ետքը ազգերնիս կարող չէ ե-
 ղած տեսնելու և վայելելու: Ո՞վ է որ չի գիտեր, թէ
 Բարկէն և անոր նախորդները՝ մանաւանդ Յովհան Սան-
 գակունին, Գիւտը, Մելիտէն և Յովսէփը՝ մեր արգոյ ի-
 մաստունէն Գոնէ չիլ ճը աղէի հելլենագէտ, լատինագէտ և
 ասորիագէտ անձինքներ են եղեր: Ո՞վ է որ չի գիտեր, թէ
 մեր երանաշնորհ Թարգմանիչներուն մեծագոյն մասը՝ սուրբ
 Սահակ Պարթեւին և սրբոյն Մեսրոպայ վախճանէն այ-
 սինքն 442 թուականէն ետքը Եթէնքէն, Բիւզանդիայէն
 և Եղէքսանդրիայէն Հայաստան վերադարձան, որոնց թիւը
 2. Հ. Մեքայէլ Հայոց պատմութեան հատ. Ա. էր.
 535=541 երեսո-ն երիւ-սէն աւելի կը դնէ, և մենք ալ
 չենք սխալիր թէ որ այս թիւը մինչեւ վաթսունի հաննք,
 որոնց Հայաստան վերադառնալուն և Բարկէնի ժողովքին
 միջոցը՝ (որուն մէջ առաջին անգամ ընդհանուր ժողով-
 քով Հայերը հերքեցին Վաղկեզնի ժողովքը), բոլորը
 40=50 տարի կը սեպուի. և այս սուրբ Թարգմանիչներէն
 ամեն մէկը թէ որ երկու երեք աշակերտ ունենային, հար-
 կաւ այն միջոցին երկու հարիւրէն աւելի գիտնական լեզ-
 ուագէտներ պիտոր համրուէին Հայաստանի մէջ: Ո՞վ է
 որ չի գիտեր, թէ Յունաց Հայաստանի բաժնին դպրոց-

Ներուն մէջ՝ այն ժամանակը առ հասարակ Յունարէն և
 Եսորերէն կը սորվեցունէին : Երբ՝ ո՞ր ճշմարտասէր , ո՞ր
 իմաստուն , ո՞ր ողջամիտ Հայր կը համարձակի ըսելու ,
 թէ այս 200 էն աւելի լիզուագէտ անձինքները ամենքն ալ
 տգէտ են եղեր , ամենքն ալ յիմար են եղեր , որ Քաղկե-
 դոնի ժողովքը առանց աղէի գեղէկո-թիւն առնելու ինչա-
 մեայ խօսիին նայելով հերքեր են , ու մեր արգոյ իմաստու-
 նը՝ առանց այս լիզուններէն և ո՞չ մէկը գիտնալու , կրցեր
 է 1400 տարի անցնելէն ետքը՝ իր ինքնածանոյց գիտու-
 թեամբը՝ անոր ճշմարտութիւնը փնտրուելու , գտնալու և
 հոգին փրկելու համար զանի ընդունելու : Թող երթայ շը-
 նորհակալ ըլլայ իւր իմաստութեանը , որուն օժանդակու-
 թեամբը՝ մեր չընդունելուն համար մեզի պատրաստուած
 դատապարտութենէն զինքը կրցեր է ազատիլ :

2. Սուրբ Մովսէս Խորենացին՝ Խորենի կաթողիկո-
 սին ժողովքին ժամանակը կենդանի չի գնելու համար , 2 .
 Հ . Միքայէն ու իր կրօնակիցները մինչև ցայսօր հնաց-
 եալ ձորձերէ շատ կարկատանն հասրեցին և շատ ալ կը
 հնարեն , բայց ասոնց ամենուն ալ փոտած ըլլալը և կար
 չի բռնելը ամենեւին դժուարութիւն չի կայ տեսնալու և
 ճանաչելու , թէ որ մտադիր ըլլանք նախնեաց հարազատ
 վկայութիւններուն : Մի միայն 1851 ամին Բազմավէպը
 (եր . 70) համարձակեցաւ թաքուցեալ ճշմարտութիւնը
 խոստովանելու , բայց այն ալ ընդ երկիւր : Իսնձ
 ճշմարտութիւն , որ միշտ կը հալածուիս և դժբաղդարար
 միշտ ալ ճշմարտասէր ըսուածներու երեսէն : Թովմայ Արժ-
 բունիին վկայութիւնը՝ որ յիշատակեալ ճերունիին 120 տա-
 րի կեանք կուտայ , և Սամուէլինը՝ որ իր տարեգրու-
 թեանց 493 թուին նոյն սուրբ Ծերունին կը յիշէ , ընաւ
 մէկ ատեն բուն Հայերը հատուածեալներուն վկայութեանը
 կարօտ չեն թողուր : Մեր ճշմարտասէր իմաստունը կ'ըսէ ,
 որ Խորենացին (491 թուին) 120 ասիին անցած ճերունի

մըն էր, և կը պահանջէ, որ մենք ալ կոյր զկուրայն իր ըսածին հաւատանք, ապա թէ ոչ, պզէպ, նախապաշարեալ և ուրիշ մակնո-ննէր պատրաստուած են մեզի համար : Բայց որ ազգային հնութեանց ղիտակ Հայ մը յանձն կ'առնէ կլել այս Մասիսու լեռան մեծութեամբ սուտը, երբոր այլ և այլ ազգային ժամանակագիրներ իրարու հետ համեմատելով և նոյն իսկ Խորենացիին (Եր. 549=550) վկայութիւնը կարդալով՝ կը գտնայ, որ յիշատակեալ պատուական անձը՝ Վրիստոսի 442=444 թուականներուն միջոցը դեռ պատանի էր, դեռ աշակերտութիւն կ'ընէր Եթէք և Եղէքսանգրիա : Ինչո՞ւ անգամ մը միտքը չի բերաւ այս պատուական իմաստունը, որ եթէ Խորենացի հայրը 491 թուին հարի-ր չսան ասրիս անցո-ցած ծերո-նի ըլլար, ասկէց բնականաբար կը հետեւէր ըսել, որ անիկայ ուսմունքի գացած ժամանակն ալ այսինքն 435 թուին՝ պէտք էր որ 75 կամ 80 տարեկան պատանի ըլլար և հետեւաբար 60 տարեկան ալ տղայ : Բայց կայ մի պատմութեանց մեջ ասոր օրինակը : Ո՛հ, ի՛նչ անալի և ցուրտ առասպել :

Մեր պատուելի իմաստունը, որ այնչափ դիւրազգաց սիրտ ունի և շինծու վախերով կը սոսկայ, ի՛նչպէս չի սուկայ այս առասպելը ստեղծելու և իր ճշմարտասէր անուանը հակառակ ամենուն կլեցունելու : Թէ որ ասանկ նորանըջան տրամաբանութիւններ հնարելը իմաստութիւն, ճշմարտութիւն և ազգասիրութիւն է, և անոնց կուրաբար չի հաւտալը տգիտութիւն ու նապաշարմունք է նէ, կ'աղաչենք իրեն, որ մինչև հիմա գտած լուսաւորեալներովն բաւականանան ու մեզ ազատ թողուն ասանկ փրկաւէտ առասպելներու հաւատալէն :

Ազգային պատմութեանց անժխտելի վկայութեանցը նայելով, մենք՝ ողջմտութեան համաձայն, Խորենացի սուրբ հայրը կը սեպենք՝ ուսմունքի գացած ժամանակը 25=30 տարեկան, ետ դարձած ժամանակը 32=37. իսկ

Բարկէնի ժողովքին ժամանակը 80=84 և ո՛չ թէ 120ը անցուցած : Վերոյգրեալ առասպելը ցրելէն ետքը , բնաւ տարակոյս չի մնար , թէ սուրբ Օտրունին ալ իրբեւ Հայոց երեւելի արքեպիսկոպոսոաց մէկը՝ այն ժողովքին մէջ գտնուած է , և թէ այն երեք տուն շարականն ալ անորն է , ինչպէս որ ընդհանուր աւանդութիւն է Հայոց մէջ :

3. Մեր արգոյ իմաստունը աղէկ գիտնալով ազգին այն մասերը որսալու կերպը , որ դժբաղդարար իրենց լեզուն չեն գիտեր , ստեպ ստեպ կը կրկնէ Յովհան Իմաստասիրին , Վերսէս Շնորհալիին , Գրիգոր Վկայասէրին , Վերսէս Լամբրոնացիին , Գրիգոր Տղային և ուրիշ Հայաստանեայց Ակեղեցւոյ մէջ իմաստութեամբ և սրբութեամբ փայլած եկեղեցականներուն անունները , գիտնալով , որ ժողովրդեան ականջին՝ անոնցմէ մէկ քանիին անունները շատ ներդաշնակաւոր կը հնչեն , որպէս զի անոնց յարգելի անուանցը տակը սքողէ իրեն իր ծնող Ակեղեցիէն բաժնուելու և պապական Ակեղեցիին վրայ պատուաստելու նախաախնքը , անանկ ձեւանալով , որպէս թէ յիշեալ բազմարդիւն ու մեծանուն անձինքը ամենքն ալ իրեն համախոհ և համակրօն եղած ըլլան : Բայց թողութիւն կը խնդրենք իրեն ըսելու , թէ հոս ալ չարաչար կը սխալի . որովհետեւ ազգին միութիւնը քայքայելու , զանի պառակտելու և անոր Ակեղեցիէն բաժնուելու ամօթալի խորհուրդը անոնց մշտքէն անդամ անցած չէր , թող թէ իրօք ՚ի գործ գնել :

Չեմ հակառակիր , որ յիշեալ անձինքներէն ոմանք կամաւ , ոմանք ակամայ միտքերնին գրին Ակեղեցւոյ միաբանութիւն ընել . բայց չէ՛ թէ պապականին հետ , ինչպէս է մեր իմաստունին անճոռնի կարծիքը , այլ Յունաց եկեղեցւոյն հետ , որն որ տեսարակիս հնդինակը և իր բոլոր կրօնակիցները կերթո՛ւածող կը կոչեն , և պապական Սիեղեյեէն դուրս իրիւրիւն չի կայ ըսելով բնմբը թնդացուցած ժամանակին , Յոյներն ալ Հայոց և ուրիշ քրիստոնեայ ազ-

դաց հետ դժոխքին բոցերուն կը դատապարտեն հակառակ իրենց ծանուցեալ եղբայրսիրութեանը , քրիստոնէական մարդասիրութեանը և անկեղծ ճշմարտասիրութեանը :

Ուրեմն Եզր , որ յունաց Հերակլ կոչսեր ստիպելովը յունաց Եկեղեցւոյն հետ միաբանեցաւ , Վահան , որ յունաց Եկեղեցւոյն հետ միաբանութիւն ընելու միտքը յայտնածին պէս , ազգային ընդհանուր ժողովքով դատապարտուեցաւ ու Վաթուղիկոսական աթոռէն իյնալով աքսորուեցաւ , Յովհան իմաստասէրը , որ Սանազկերտի ժողովքին մէջ թէ՛ Լիւնը և թէ՛ Վաղկեզոնի ժողովքը հերքեց , և ասոր անժխտելի ապացոյց է՝ ժամանակակից ազգային մատենագրաց վկայութիւններէն զատ՝ Ընտաօրուի մէջ գտնուած Յունաց և Վրաց անհնարին ատելութիւնը , զորն որ հազարաւոր տարիներէ ՚ի վեր այս մեծանուն իմաստասէրին դէմ դեռ կը շարունակեն , թէպէտ և ասիկայ՝ հատուածեալ Հայերէն ոմանց անհիմն կարծեացը համեմատ՝ պապական քաւարանին մէջ սրբուած , արդարացած ու Լիւնի հարազատներուն կարգը անցած է : Եյս յիշատակեալ անձինքը , կ'ըսեմ , ինչո՞վ տեսրակիս հեղինակին հայր , ծնող , հայրապետ և համախոհ կը սեպուին : Ինչո՞ւ անգամ մը այս յարգի իմաստունը Վենետիկի տպարանը 1833 ին տպուած Յովհաննոս իմաստասիրի աշնեցոյ մատենագրութիւնը անունով գրքին 25 , 26 , 28 և 30 երեսները չի կարգաց , որուն վարդապետութիւնները և կանոնադրութիւնները ոչ միայն Հռովմայ հակառակ են , այլև անկէց ալ դատապարտուած : Եւելորդ է հոս սուրբ Արսէս Շնորհալիին և անոր անուանակից Լամբրոնացիին որպէս և Գրիգոր Տղային անունները յիշելը և անոնց վարդապետութիւնները քննելը . և ով որ կ'ըսէ անոնց համար , թէ ուղեցին Հռովմի հետ միաբանութիւն ընել , մանաւանդ Շնորհալիին համար , իր թանձր տգիտութենէն , կոյր նախապաշարմունքէն և ապառուժ կամապաշտութենէն զատ

աւրիշ բան չի ցըցուններ : Այսին զի ով որ Շնորհալին ընդհանրականը կարդացեր է նէ, անտարակոյս գիտէ, որ անոր փոյթն էր՝ երկու արեւելեան ազգաց այսինքն Հայոց և Յունաց եկեղեցիները միաբանել և ոչ թէ Հայոցն ու Ասիանցը . և այս ալ այն ժամանակը, որ քանի մը հաշիւը տարուընէ ՚ի վեր Հռովմ բաժնուած էր Յունաց Եկեղեցիէն, և Փոտ պատրիարքին օրէն սկսեալ իրար կը նըզովէին :

Սուրբ Մերսէս Շնորհալին՝ Կոստանդնուպօլսոյ Սիքայէլ պատրիարքին գրած թուղթին մէջը՝ Յունաց Եկեղեցոյն համար կ'ըսէ «ուրբ և ընդհանրական կաթողիկէ Եկեղեցի» (էր . 149, Բեդերսպուրկի տիպ) : Մեր ճշմարտախօս տնօրակին հեղինակը՝ ինչպէս վերը ըսինք, նոյն Եկեղեցին կը դատապարտէ իբրեւ հերձուածող և մոլորեալ ու կ'ուզէ որ մենք զինքը սրբոյն Մերսէսի հարազատ որդի ճանաչենք : Մեր արգոյ իմաստունը թէ որ շնորհ ընէր անգամ մըն ալ Ընդհանրականին 125, 126, 127, 128, 129, 130, 131, 161 և 165 երեսները կարդար, անտարակոյս պիտի ամաչէր բերանը բանալու, որովհետեւ Շնորհալին հոն պարունակած վարդապետութիւնները՝ ոչ միայն Հռովմայ հակառակ են, այլ և անկէց դատապարտուած . ինչպէս են սուրբ Հոգիին ՚ի Հօրէ բղխելու վարդապետութիւնը, եկեղեցւոյ անտեսանելիութիւնը, Վրիստոսի ծննդեան և մկրտութեան ՚ի միասին յունվար 6 ին տօնելը, երբ քարեան երգը խաչեցարիւ հանգերձ ՚ի դէմս Վրիստոսի միայն երգելը, սուրբ Պատարագին անշուր և անապական բաժակը, և նոյն իսկ Եւեոնի « Ոմն ին և ոմն ին » հակառակ՝ « Ո՛չ ոմն ուժեղ և ոմն անզօր » երգը : Թէ որ կարդար Ընդհանրականին 212 երեսը, պիտի տեսնար մեր արգոյ իմաստունը, որ սուրբ Մերսէս Շնորհալին Վաղկէզոնի ժողովքին վրայ նոյն համարումն ունէր, ինչ որ մենք՝ անոր հարազատ որդիքս ունինք, այսինքն է՝ Վրիստոսի

տեսան մերոյ Եստուածային ու մարդկային երկու բնութեանց բաժանաբար դաւանումը, զորն որ սուրբ Հայրը ամբարշտութիւն է կ'ըսէ : Եյս մտքով և այս հոգւով գրուած են նաև «Արեւիկացիին, Վկայասէրին և Լամբրոնացիին բովանդակ ճառերը, աղօթքները և մեկնութիւնները : Ուրեմն ինչէ՞ն կը հետեւի, որ անոնք տետրակին հեղինակին ըսածին պէս՝ Բանի- և Գործով, Քննութեամբ և Ճանաչմամբ, ազգով ու Ժողովով այս ճշմարտութիւնը ընդունելու և ընդհանրական էկեղեցիին (Հռովմի) հէպ սէր և միաբանութիւնն ընելու պակելու ուզելու են : Ինչո՞ւ մեր արգոյ հեղինակը անդամ մը միտքը չի բերաւ, թէ խարէութիւնը որչափ ալ ոսկեզօծեալ և ճշմարտանման ըլլայ, այսու ամենայնիւ կանուխ կամ ուշ երեւան կ'ըլլայ : Ինչո՞ւ մեր արգոյ հեղինակը՝ իր հարազատ ծնողքը և լատինահայութեան նախաշաւիղները մոռցեր, վերոյիշեալ սրբազան անձերուն սրբազան զգեստուց տակը կը պահուրտի : Ինչո՞ւ կ'ըսեմ աչքերը չի բանար ու իր նախահարքը չի խոստովանիր, որ են Աոստանդին կատուկեցիները, Գրիգոր անախարդեցիները, Յակոբ ստեցիները, Մխիթար ապարանցիները, Յովհանն քոնեցիները, Աերսէս պաղեանք, Աիկոյ լեմպերկցիները, Իսաչատուր կարնեցիները, Վարդան յունանեանները, Գէորգ կապուտիկները և այլք :

4. Հռովմի եկեղեցւոյն մայր և Գլխի էկեղեցեաց և միանգամայն ուղղափառ ըլլալուն նոր ապացոյց մըն ալ՝ անոր Եւրոպայի, Եմերիկայի, Եփրիկէի և Եսիայի ամեն ազգաց մէջ տարածուած ըլլալը, ևս և Հնդկաստան, Ղազն, Ովկիանիա և Ղենաստան անհաւասանները դարձնելու համար առաքելական քարոզիչներ խաւրելը և այլն է եղեր : Մենք ալ կը խոստովանինք, թէ Հռովմի եկեղեցին մայր է, բայց միայն Իտալիոյ եկեղեցեաց նկատմամբ, ինչպէս Հայոց սուրբ Էջմիածնի Եկեղեցին ալ՝ մայր է բոլոր Հայկական, Վրաց, Ուտէացւոց, Եղուանից և այլ ազգաց նը

կատմամբ . իսկ Արուսաղէմինը ընդհանրական ծնող ամէնայն եկեղեցեաց Վրիստոսի = Հռովմի եկեղեցին գլուխ է՝ բայց միայն արեւմտեան եկեղեցեաց նկատմամբ և ոչ Արեւելեաց , ըստ որում քրիստոնէութիւնը Արեւելքէն Արեւմուտք անցաւ և ոչ թէ Արեւմուտքէն Արեւելք = Մեր արգոյ իմաստունը՝ թէ որ Աւետարանին հողին քիչ մը հասկըցած ըլլար , տարակոյս չունիմ , որ այս օրինակ տղայական ճամարտակութեան մէջ չէր իյնար և իր ծառայած եկեղեցւոյն ուղղափառութիւնը գեանի տարածութեամբ և ազգաց պէսպիսութեամբ չէր չափեր . որովհետեւ ճշմարիտ քրիստոնէայները աղէկ գիտեն , որ կոչուածները ընտրուածներէն միշտ շատ պիտի ըլլան , և կորստեան լայն ու ընդարձակ ճանապարհին մէջ քաղոյնները՝ բազումը ըստ Աւետարանին = Ինչո՞ւ անգամ մը մեր իմաստուն ճշմարտասէրը միտքը չի բերաւ Արիոսականութեան աճումը , որ չորրորդ դարուն մէջ՝ Սպանիայէն սկսեալ Հռովմ և իր Ալեքսիոս անսխալ պատն ալ մէկտեղ առնելով՝ մինչեւ խաղաղական Ովկիանոսը տարածեցաւ , կամ ինչպէս Ալեքսնդիոս կը խոստովանի , արիոսականութեան լոյնը ոչ միայն չիլ ճը պեղ ապահանած է , այլ գրեթէ բոլոր աշխարհ : Ուստի կը հարցունեմ մեր արգոյ իմաստունին , թէ Արիոսականութիւնը՝ ա՞նի երկիր ու ամեն ազգերուն մէջ տարածուած ըլլալուն համար , իրաւունք ունէ՞ր մի , Վրիստոսի մի , սուրբ , ուղղափառ և ընդհանրական Ակեղեցի սեպուելու . թէ որ չունէր , ինչպէս որ պիտի պատասխանէ մեր իմաստունը , չունի և ես կը պատասխանեմ իր Հռովմը , և սուրբ Գրիգոր Վաղկանգացիին բերնովը կ'ըսեմ , թէ Հռովմեականները Բաղճութիւնը եկեղեցի կը սեպեն և գործիկ հօպը կ'անարգեն : Ժողովուրդը անոնցն է , Բայց հասապառ Տեր չո՞ն է : Եսանկ ալ ամեն ողջամիտ մարդիկ կրնան դատել Հռովմի՝ Ղենաստան , Հնդկաստան , Ովկիանիա և ուրիշ հեռուտը երկիրներ առաջելլան չարողիչներ խաւրելը , որոնց համբաւը

Հինգ հարիւր տարիէն ՚ի վեր է կը լսենք , ու դեռ արդիւնք
 մը չի տեսանք = Բայց կը սխալիմ : Ե, յս առաջիկայն չար-
 ղիչները մեծ արդիւնք ունեցեր են Երեւելքի մէջ , ուր հա-
 զարամեայ քրիստոնէից մէջ , ինչպէս են Հայք , Յոյնք ,
 Եսորիք և այլն , երկպառակութիւն , ատելութիւն , բա-
 ժանմունք և այլ ամօթալի չարիքներ սերմաներ են , ու
 որոնց համարը պիտի տան անշուշտ անկաշառ դատաւո-
 թին ատեանին մէջ : Թէ որ իրաւցընէ Հռովմ՝ մեր ար-
 գոյ իմաստունին ըսածին պէս , անհաւատները դարձունե-
 լու փոյթ ունի , ինչո՞ւ համար իր քթին տակը կիցած Հը-
 ռովմի ժողովրդեանը մէջ քրիստոնէական սէր և հաւատք
 չի քարոզեր , այլ զօրաց բանակներով և մահաբուղիս թըն-
 դանօթներով անոնց հետ կը պատերազմի և բռնի եկեղեցի
 կը տանի զանոնք : Ինչո՞ւ կ'ըսեմ , իր բուն եկեղեցին երե-
 սի վրայ թողուցեր , չի պաշտպաներ , ու Եսիա , Ովկիա-
 նիա և ուրիշ հեռաւոր սեղուանք կը վազէ ու ռամիկ ժո-
 ղովուրդներ և պարզամիտ մարգիկներ կը փնտրուէ : Որով-
 հետեւ միայն Եւրոպայի և նոյն իսկ Հռովմի մէջ՝ իր կը-
 բօնքը ձգող ու բողոքականութիւն դաւանող չառաստան և
 կինգ միլիոնէն աւելի գաղղիացի , անգղիացի , գերմանացի ,
 լեհացի , հոլանտացի , իտալացի և ուրիշ ազգեր կը գըտ-
 նուին և օր ըստ օրէ ալ կը բազմանան : Թողունք Եմե-
 ռիկայի և ուրիշ երկիրներու մէջ գտնուածները , ուր ամեն
 տարի չէ՛ թէ մերազգի անպաշտպան պարզամիտներուն
 պէս մարմնական և աշխարհային շահերու խոստմունքներէ
 խաբուելով , մեկով , երկուքով , հինգով , տասնով կ'երթան
 պապական եկեղեցին հետ կը միանան , այլ հազարներով և
 հարիւր հազարներով , որոնց մէջ շատ գիտնական և մեր ի-
 մաստունէն չիլ ճը վէր իմաստուն մարդիկ ալ կան , որոնք հետ
 զհետէ Հռովմի եկեղեցիին և անոր քաւարանը ձգելով ,
 կ'երթան կամ յունադաւան կ'ըլլան կամ բողոքական , կամ
 ուրիշ նոր կրօն մը կը կազմեն : Բաւական է կարծեմ հոս

մէկ դէպք մը միայն յիշելը : 1843 ին , Ռուսաստանի մէջ՝
չորս Հինգ Հարիւր Հազարի մօտ պապական , իրենց եպիս-
կոպոսներովը , վարդապետներովը , քահանայներովը , վան-
քերովը և եկեղեցիներովը մէկտեղ ձգեցին Հոովմը և ա-
մենքն ալ Յունադաւան եղան . ամեն տարի ալ մեծամեծ
դարձեր անպակաս են : Ասոր համար՝ շատ իմաստութեամբ
վարուած կ'ըլլար այս Տայր և Գլը-ի եկեղեցեայը , թէ որ
աւելի փոյթ ունենար իր արդէն ունեցածները չի կորսըն-
ցունելու , քան թէ քանի մը պարզամիտ ու ուսմիկ Հայեր
որսալու կամ թէ քանի մըն ալ չնչահաւատ կռապաշտներ
դարձունելու , որոնք ինչպէս կը լսենք , անուամբ և եթ քը-
րխտոնէացեալք՝ տակաւին իրենց հեթանոսական կարգերը ,
ծէսերը , արարողութիւնները և այլն կը պաշտեն :

Այս նիւթերուն վրայ շատ բան ունէինք գրելու , բայց
յարգի հասարակութեան ձանձրութիւն չի տալու համար
առ այժմ զանց կ'ընենք , ուրիշ ժամանակի և տեղոյ թող-
լով , և համառօտիւ կը պատասխանենք մեր արդոյ իմաստու-
նին , թէ Հայոց ուղղափառ և առաքելական ընդհանուր
եկեղեցին՝ Քաղկեդոնի ժողովքը և անոր սահմանագրու-
թիւնը չընդունելով այնչափ ուղղափառ է , որչափ ուղղա-
փառ էին բոլոր քրիստոնէից Ակեղեցիները այն ժողովքէն
առաջ : Աւ թէ որ Հայոց Ակեղեցին՝ չորրորդ ժողովքը
չընդունելուն համար հերձուածող սեպուի , նոյն գրու-
թեամբ հերձուածող կը սեպուի իր Հոովմինը՝ ութերորդ
տիեզերական ժողովքը չընդունելուն համար , և աւելի ի-
բաւամբ՝ նիկիական Հանգանակը նորամայձ յաւելուածով
խանգարելուն և առաջին երեք տիեզերական ժողովոց կա-
նոնները եղծանելուն համար . և կ'աղաչեմ իր արդոյ իմաս-
տութեանը և իր իմաստակիցներուն , որ բաւական սեպն
մինչեւ ցայսօր Հայաստանեայց եկեղեցւոյ դէմ ըրած զըր-
պարտութիւններնին և չարախօսութիւններնին : Աստուծոյ
ողորմութեան ու արքայութեան դուռները մեր դէմը չի գը-

ցին իրենց ամեն ըսածը չընդունելնուս համար : Թէ որ հիմա հուր բուն Հայերը՝ երանելի և առաքելաշնորհ սուրբ Լուսաւորչին և սուրբ Շնորհալին հաւատոյ դաւանութեանէն, կարգէն, կանոնէն և աթոռէն հեռացած կամ խտուրած են նէ, թող ցրցունեն եղբայրաբար . ապա թէ ոչ, գիտնան, որ Հայերը ինչպէս ասկէց առաջ, անանկ ալ ասկէց ետքը՝ անոնց սորվեցուցածէն ու թողուցածէն դուրսնոր բան նոր յաւելուած ընդունելու միտք չունին : Վաղարեցունեն այսուհետեւ թրեանց Ռափայէլ վարդապետին (1845) ճառերուն էր . 100=101, և 1851 բազմավէպին էր . 193=200 տեսնուած հեթանոսական ամբարշտութիւնները՝ Հայաստանեայց առաքելական Արևիկեցւոյն դէմ, որուն մէջ իրենցմէ շատերը ծնած ու մկրտուած են . ապա թէ ոչ, մենք ալ կը պարտաւորինք մեր խաղաղասէր բնաւորութեանը հակառակ՝ մեր հակառակորդներուն դէմ այն դատաստանը ընել, ինչ որ իրենք մեզի դէմ կ'ընեն, և այն չափովը չափել մեր արգոյ ընտանի թշնամիները, որով իրենք զմեզ կը չափեն . և գիտնան, որ եթէ իրենք՝ մեր եկեղեցւոյն մէջ հազարամեայ բռնութիւններէ և տեղափոխութիւններէ պատճառեալ մէկ երկու ծխական մանր մունր շնչին խանգարմունք կամ անկարգութիւն գտնալու ըլլան, որոնք բարեբաղդաբար ընդհանուր չեն և կրօնից էական մասն սեպուած չեն մեր մէջը, մենք իրենց հայր եկեղեցեաց ըսածին մէջ՝ արգէն քանի մը քառանորդականներ գտած, ժողոված և կարգի դրած ենք : Իսկ եթէ քանի մը Հայ ազգի ուխտադրուծ Աստակներու և Սուրմակներու վրայ յոյսերնին հիմնած՝ կ'սպասեն որ պապականութիւնը Հայոց մէջ մտնայ, խոնարհաբար և յարգանք կը յայտնեմ մեր արգոյ իմաստունին, թէ աւելի դիւրին է հաւատալ, որ արեգակը Մըլմուտքէն կ'ելլայ, քան թէ այս օրինակ ակնկալութիւն մը կատարոււմ կը գտնայ : Ուստի եթէ մեր արգոյ ազգասէրները արգարիւ իրենց տառապիւալ ազգը կը սիրեն

գործքով ու չէ թէ բերնով, թող վերադառնան իրենց ծր-
նող եկեղեցիին գիրկը, թող քրիստոնէական հեղութեամբ
յանձն առնուն իրենց մարդկօրէն սխալանքը, և այն ժա-
մանակը՝ իբրև Եկեղեցւոյ միակրօն ու հաւատակից որ-
դիներ՝ ջանան, աշխատին մեղի հետ՝ քանի մը ներմուծեալ
ճիսական խանգարմունք (թէ որ կան նէ) ուղղելու, պա-
կաս (կայ նէ) լեցունելու, ազգը բարեկարգելու, ման-
կունքը կրթելու, հնութեամբ ու պատուականութեամբ
պանծալի Հայոց ազգը վերանորոգելու, որով և Եստու-
ծոյ և իր ամեն սրբոց օրհնութիւնը և շնորհքը և Հայաս-
տանի հարազատ օրգւոց խորին շնորհակալութիւնն ու ե-
րախտագիտութիւնը վայելելու արժանի ըլլան այժմ և միշտ
և յաւիտեանս :

Ո՞նչ յաղհասիրաց :

20 Մարտի, 1852 .

Վ Ր Ի Պ Ե Կ Ք

Երես .	Տող .	Սխալ .	Ուղիղ :
3	10	Սկօզիաններուն	Սկօզեաններուն
3	11	Բննետիկեաններուն	Բննեդիկտեաններուն
5	31	սեպած	սեպուած
8	20	չի սոսկայ	չի սոսկաց
8	23	Ճմարտութիւն	Ճմարտասիրութիւն
8	25	նապաշարմունք	նախապաշարմունք
9	17	պատուաստելու	պատուաստուելու
10	24	կարգաց	կարդաց
11	17	125 ,	11 , 125 ,
14	27	եկեղեցին	եկեղեցիին
14	30	եկեղեցիին	եկեղեցին
15	3	քահանայներովը	քահանաներովը

Faint, mirrored text bleed-through from the reverse side of the page, appearing as a ghostly image of the original content.

17

17

INDEX

No.	Page	Description
1	10	...
2	11	...
3	12	...
4	13	...
5	14	...
6	15	...
7	16	...
8	17	...
9	18	...
10	19	...
11	20	...
12	21	...
13	22	...
14	23	...
15	24	...
16	25	...
17	26	...
18	27	...
19	28	...
20	29	...
21	30	...
22	31	...
23	32	...
24	33	...
25	34	...
26	35	...
27	36	...
28	37	...
29	38	...
30	39	...
31	40	...
32	41	...
33	42	...
34	43	...
35	44	...
36	45	...
37	46	...
38	47	...
39	48	...
40	49	...
41	50	...
42	51	...
43	52	...
44	53	...
45	54	...
46	55	...
47	56	...
48	57	...
49	58	...
50	59	...
51	60	...
52	61	...
53	62	...
54	63	...
55	64	...
56	65	...
57	66	...
58	67	...
59	68	...
60	69	...
61	70	...
62	71	...
63	72	...
64	73	...
65	74	...
66	75	...
67	76	...
68	77	...
69	78	...
70	79	...
71	80	...
72	81	...
73	82	...
74	83	...
75	84	...
76	85	...
77	86	...
78	87	...
79	88	...
80	89	...
81	90	...
82	91	...
83	92	...
84	93	...
85	94	...
86	95	...
87	96	...
88	97	...
89	98	...
90	99	...
91	100	...

